



ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՅԵՐՔՈՒՄ

Եթե ձեր բիզնեսի տարածքը բաց է հանրության համար, ապա շենքային հարմարությունները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս չափորոշիչների վերաբերյալ սխալ պատկերացումները կարող են ձեզ կասկածներ ներշնչել ձեր հիմնարկի համապատասխանության հարցում: Եկեք պարզաբանենք իրականությունը:

1990 թվականի ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՎՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՕՐԵՆԵԸ (ADA) լքաղաքացիական իրավունքների մասին դաշնային օրենք է, որն արգելում է խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ և պահանջում է, որ բոլոր հանրային ու առևտրային շենքային հարմարությունները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՂԵՐՍԸ բովանդակում է շինարարությանն առնչվող մատչելիության դրույթները, որոնք պահանջներին համապատասխանող շինարարության չափորոշիչներն են: Որևէ շինության համապատասխանությունը հիմնված է շինարարության կամ փոփոխության պահին գործող Կալիֆորնիայի Շինարարական կոդեքսի տարբերակի վրա:

Առասպել

Փաստ

Իմ բիզնեսը պարտավոր չէ համապատասխանել պահանջներին, քանի որ շենքը հին է:

«Պատասխանատվությունից պաշտպանող» դրույթներ չկան:

«Պատասխանատվությունից պաշտպանող» ասելով նկատի ունենք այն պատկերացումը, թե «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին» օրենքի պահանջները չեն տարածվում օրենքի ընդունումից առաջ կառուցված շենքերի վրա: Սակայն դա ճիշտ չէ: Անկախ շենքի տարիքից կամ պատմական նշանակությունից, եթե դա բաց է հանրության համար, ապա դուք պետք է ապահովեք ձեր առաջարկված ապրանքների և ծառայությունների մատչելիությունը:

Մատչելիության հավաստագրված մասնագետը (CASP) կարող է ձեզ հայտնել, թե ինչ փոփոխություններ են անհրաժեշտ, եթե այդպիսիք անհրաժեշտ են, որպեսզի ձեր հիմնարկը համապատասխանի պահանջներին:

Շենքը պատկանում է ուրիշին, ուստի ես պատասխանատու չեմ խախտումների համար:

Համապատասխանությունը միայն տանտիրոջ պատասխանատվությունը չէ:

Ե՛վ վարձատու, և՛ վարձակալը պատասխանատու են հիմնարկի հանրային տարածքների մատչելիության համար: Եթե դուք վարձակալում կամ վարձով եք տալիս որևէ տարածք, խորհուրդ է տրվում պայմանագիր կնքել տանտիրոջ հետ այն մասին, թե ով է պատասխանատու շենքային հարմարությունների մատչելիության ապահովման և սպասարկման համար:

Վարձակալության պայմանագրերը պետք է սահմանեն, թե գույքը ստուգվել է արդյոք Մատչելիության հավաստագրված մասնագետի (CASP) կողմից, և եթե այո, գույքը համապատասխանո՞ւմ է շինարարությանն առնչվող մատչելիության բոլոր կիրառելի չափանիշներին:

Չափորոշիչներն անընդհատ փոխվում են, ինչը դժվարացնում է համապատասխանության պահպանումը:

Ձեր հիմնարկի շինարարական չափորոշիչները չեն փոխվում:

«Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքը ավելի քան քսան տարվա ընթացքում թարմացվել է միայն մեկ անգամ: Թեև Կալիֆոռնիայի Շինարարական կոդեքսը պարբերաբար փոփոխվում է, սակայն ձեր հիմնարկի շենքային հարմարությունների համապատասխանությունը որոշվում է համաձայն այն շինարարական կոդեքսի, որը գործում էր տվյալ շինության սկզբնական կառուցման կամ վերջին փոփոխության ժամանակ: Ժամանակին պահանջներին համապատասխանող շինությունը չի համարվում չհամապատասխանող այն պատճառով, որ մատչելիության կանոնակարգերն ու ուղեցույցները թարմացվում են, բայց մատչելիության առանձնահատկությունները պետք է պահպանվեն:

Մատչելիության հավաստագրված մասնագետը կարող է որոշել ձեր հիմնարկի համապատասխանության կարգավիճակը համաձայն կիրառելի չափորոշիչների (ADA և Կալիֆոռնիայի շինարարական կոդեքս):